

A GOOD  
ADVERTISING  
MEDIUM

# Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ  
THE CITIZEN

THE ONLY  
ARMENIAN  
PAPER  
Published in  
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 8. ՏՐԷՉՆՕ, ՔԱԼ. ՇԱԲԱԹ, ՀՈԿՏ. 4, 1902 ԳԻՆ 5 ՍԷՆԹ

## Քաղաքական Պայքար

— 0 —

Անցեալ կիրակի երեկոյ Քորթ Հաւրի պարտիզին մէջ տեղի ունեցաւ Ռամկավարական մեծ ժողովը: Հազարէ աւելի ունկնդիրներ գաւառիս ամեն կողմերէն փութացեր էին ներկայ ըլլալ՝ մտիկ ընելու համար կուսակցութեան ճարտարախօս ընտրելին՝ Տ. Ք. Լէյն: Ժամը ութն էր երբ Մ. Ֆութ ժողովը բացաւ, ու փոխ Նախագահներն բեմ հրաւիրելէ վերջ օրուան Ատենայեանը՝ Ճ. Ֆ. Պլընս ներկայացուց ժողովին, որմէ ընդունուեցաւ բուն ծափահարութեամբ: Ներկայից մէջ աչքի կը զարնէին քաղաքիս Քաղաքապետն ու Գաւառական և Նահանգային ընտրելիներէ շատերը: Խօսեցան Տ. Տաքուէլըր՝ տեղակալ Նահանգապետի ընտրելին և ուրիշներ: Նշանակութեան արժանի էր Տ. Վուրհիս որ յանուն քաղաքիս գործաւորական Միութեան բարի գալուստ մտղթեց Ռամկավարականաց Ընտրելիին, և յանձնարարեց գործաւոր դասակարգին իրենց քուէները տալ այս անձին որ ոչ միայն գործաւորական միութեան մը պատուոյ անդամն էր ցայտօր՝ այլ իր ասորբեր պաշտօնավարութեանց մէջ գործաւորութեան բարեկամն և անոնց իրաւանց փաստարանը եղած էր անցելոյն մէջ:

Երբ Ֆրանքլին Լէյն ծափերու որոտին մէջ բեմ բարձրացաւ՝ ժողովոյի համակրանաց ցոյցերը իրենց վերին աստիճանին հասած էին: Ատենախօսը իր ճարտար լեզուով մէկ ժամէ աւելի խօսեցաւ այն պատճառներէ մի քանիին վրայ որք բաւական էին ամեն քաղաքացիի քուէ Ռամկավարականաց ընտրելիներու շուրջը կեդրոնացնել:

Կէս գիշերի մօտ էր երբ ժողովուրդը ցրուեցաւ՝ նուագներու և ծափերու որոտին մէջէն:

Այս բացման ժողովին ներկայ եղող մէկը չէր կըրնար ուրիշ բան մը գուշակել՝ եթէ ոչ Ռամկավարական յաղթութիւն յառաջիկայ Նոյեմբերի ընտրութիւններէ վերջ:

## ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

— 0 —

— Չամիչի Ընկերութեան վարչութիւնը անցեալ Շաբաթ երեկոյ այս տարուան չամիչներու գինը որոշեց ի մեծ գոհունակութիւն բոլոր այգեպանաց: Իսկ Չամիչի վաճառականք՝ առանց բացառութեան՝ որոշուած գինը չափաւոր և գոհացուցիչ գտան՝ հակառակ

տիրոջ աննպաստ կարծիքներուն: Աւելորդ է ըսել թէ ներկայ պարագաներուն տակ այսպիսի բարձր գին մը ստանալը անկարելի պիտի ըլլար եթէ այգեպանք թող տային որ Ընկերութիւնը քայքայուէր:

Ահաւասիկ գիներու ցուցակը:

Երկու Քրան Մըսքէթ	Փաւնտը	5	Սէնթ
Երեք " "	" "	5	ու կէս "
Չորս " "	" "	6	Սէնթ
«Սիտէս» " "	" "	5	"
Սիտէս Սըլթանաս " "	" "	5	"
" Թամսըն " "	" "	5	"

2 քրան Լընտըն Լէյլըս	20 փունտ. սնտկ.	ար. 1.30
3 " " " "	" " "	" 1.40
4 " Ֆէնի Քրթըրս	" " "	" 2.00
5 " Տէ Հէշաս	" " "	" 2.50
6 " Իմփիլերս	" " "	" 3.00

Այս գներու դէմ ոչ մի այգեպան կրնայ առարկութիւն ընել՝ երբ մանուսնդ յիշէ թէ անցեալ տարի երբ բելքը ներկայի կէսին չափ չկար, փաւնտին երեք սէնթէ իսկ պակաս ստացաւ՝ շնորհիւ Քրթըրի հետեւած յախուռն և վնասակար ընթացքին:

Անցեալ երկուշաբթի օր տեղի ունեցաւ Ընկերութեան Ընդհանուր Ժողովը: Թէև բազմութիւն մը ներկայ չէր, բայց զրկուած քուէները մեծամասնութիւն կը կազմէին: Քուէհամարը սկսաւ ժամը 10ին և տեկց մինչև ժամը 2: Արդիւնքը սա եղաւ թէ 862 քուէներուն 834ը ի նպաստ առաջարկութեան քուէարկած և իրաւունք տուած էին Վարչութեան կէս միլիոն տղար փոխ առնել ի հարկին: Այս գոհացուցիչ արդիւնքը յայտարարուելէ անմիջապէս յետոյ Վարչութիւնը ժողով մը կազմեց և որոշեց 3 սէնթի նախավճար մը տալ այգեպաններուն իրենց՝ Ընկերութեան յանձնելիք չամիչի իւրաքանչիւր փաւնտին:

— Մեզ լուր կը տրուի թէ Ուայթ պրիմ Բօտի կողմերը գիշերները չամիչ կը գողցուի եղեր: Հայ այգեպան մը բաւական կորուստ տուած է այս առթիւ: Այդ կողմերը եղող Հայ այգեպանք, ինչպէս նաև բոլոր այգեպաններն զգոյշ ըլլալու և իրենց չամիչները ճամբաներէ հեռու պահելու են ապահովութեան համար:

— Բատիկեան եղբարք լսելով թէ Չամիչի գողերը կը շարունակեն իրենց գիշերային գործը Ուայթ Պրիմ Բօտի կողմերը, անցեալ գիշեր մինչև առաւօտեան ժամը 2 ու կէսը կապասեն անհաճոյ այցելունքու գալստեան: Վերջի պահուն կը տեսնեն թէ եր-

կու ձիով կառք մը, որուն վրայ երկու հոգի կան եղեր, կուգայ ու կը կենայ իրենց այգիին առջև: Հաւանական գողերը կառքէն հագիւ վար կիջնեն իրենց գործը սկսելու՝ երբ անհամբեր գիշերապահք արմուկ կը հանեն ու գողերը կը փախին անմիջապէս Տիմօքրատ լրագիրը կըսէ թէ Բասիկեանք փոխանակ արմուկ հանելու՝ սպասելու և յարմար ժամանակին հրացանի հարուածով մը վերջ ստուռ էին այդ ամբիայի գործին:

—Քաղաքիս ծանօթ Հայ բժշիվի՛ հանգուցեալ Տքթ. Պատեանի երգչուհի Կուսարը՝ Տիկն. Տէնպի, որ իբր մէկ տարի առաջ Թրէզնօ այցելած էր իր հօրը մահուան առթիւ, և որ թասերարեմի վրայ ծանօթ է Օր. Ալէքսիա Պատեան անունով, կը լսենք թէ այժմ իր էրկանը հետ միասին Լճնաօնի մէջ «Թիւ մէկ Փէլ ըսթրիա» անուն նուագախումբ մը կը ներկայացնեն մեծ յաջողութեամբ:

Բացի Օր. Պատեանէ՛ Ամերիկայի Հայ Կողմակա-նութիւնը ուրիշ երգչուհի մ'ալ սուսած է թատերական աշխարհին՝ Օր. Զապէլ Կանկարեանը, որ հիմայ Զիքակոյի մէջ կերպէ՝ Թրքա Զապէլ անուն սակ:

Այս երկու Հայ երգչուհիներն ալ անուանի զիրք մը բռնած են իրենց ընտրած այս ճիւղին մէջ:

—Նահապետ Մաղաքեան 20 արտավար այգի մը գնեց 5500 սուրբի՝ քաղաքէս իբր երկու միւս ղէպի արեւելք:

—Միացեալ Նահանգաց Երկրագործական Նախա-րարութեան կողմէ վերջերս հրատարակուած տեղեկա-գիր մը կըսէ թէ 1900ին մէկ երկիրին 578 միլիոն տղարի երկրագործական արտադրութիւններ մտած են յԱնգղիա՝ տարրեր երկիրներէ: Ասանց մէջ առա-ջին տեղը կը բռնեն Միացեալ Նահանգները որոց ար-տադրութիւնը միայն՝ արժամ է 513 միլիոն տղար:

—Անցեալ Կիրակի օր տեղի ունեցաւ Պ. Կարապետ Թոփրահանեանի յուղարկաւորութեան ու թաղման հանդէսը արժանավայել շքով: Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ Տ. Սահակ Վարդապետ գեղեցիկ գոմ-բանական մը խօսեցաւ: Հարիւրէ աւելի յուղարկա-ւորք ընկերացան զազաղին ղէպի գերեզմանատուն՝ իրենց վերջի յարգանքը մատուցանելու Հաճոցեղոյ յիշատակին: Կամբանականներ խօսեցան Տիարք Կի-րակոս Յովհաննէսեան, Յակոբ Նշիկեան և Հայկակ Էկիկեան, որք թուեցին Հանգուցելոյ բարեմասնու-թիւններն ու յերկնից մխիթարութիւն խնդրեցին անոր այրիին ու հինգ զաւակաց, որոց երկուքը մի-այն՝ Տքթ. Յովհաննէս և Միհրան, որք Նիւ Եորք կը գտնուին, բացակայ էին իրենց հօր թաղ-ման տխուր հանդէսին, և որոց համար մասնաւորապէս իրենց ցաւակցութիւնը յայտնեցին տանախօսք և բոլոր յուղարկաւորք:

—Տքթ. Արմենակ Թոփրահանեան, որ իր Հօր մահ-ուան առթիւ քաղաքս եկած էր հապճեպով, անցեալ Երեքշաբթի օր Քօլթըն վերադարձաւ՝ քանի մը շա-աթէն Թրէզնօ գալու և հոս հաստատուելու մտօք:

—Փարիզէն կը հեռագրեն թէ Էմիլ Զօրա, Թրան-սոցի անուանի վիպասանն ու հեղինակը որ Տրէյֆու-զի ծանօթ խնդրոյն մէջ մեծ ու նոր համբաւ ստա-ցաւ՝ Հրէից պաշտպան կանգնելով, Սեպտ. 29ի առա-ւօտուն մեռած կը գանուի իր անկողնոյն մէջ: Զօրայի այս անակնկալ մահը յառաջ եկած է իւր նըն-չասնեկի վաւարանէն ծխացող մուխէն, որ խեղ-գամահ ըրած է անուանի գրագէտը:

—Նախագահ Բուզուէլի բուսական հիւանդ է: Այս երկրորդ անգամն ըլլալով վիրաբուժք գործողու-թիւն մը կատարեցին անոր ձախ սրուզին վրայ: Թէև բժիշկները մանրամասնութիւն չեն տար այս մասին, բայց կը վառահայնեն թէ վատնգէ բուրբովին աղտո- է Նախագահը:

—Ըսթաքթի մէջ մեծ հրդեհ մը եղաւ Սեպտ. 23ի գիշերը: Արեւելքը Փայլիլըն անուն շէնքը ու բազ-մաթիւ բնակարաններ հրոյ ճարակ եղան: Կորաւորը կէս միլիոն տղարի շափ կը հաշուէ:

—Սօֆիայէն Սեպ. 29ը թիւ հեռագիր մը լուր կու-տայ թէ Մակեդոնիոյ յեղափոխականները Ճանքօֆի առաջնորդութեամբ երեսն եկած են դարձեալ: Ասնք նոր կառավարութիւն մը կազմակերպած են, որուն հրամանաւ յեղափոխականներն կառաջնորդուին չորս տարրեր գաւառներու մէջ: Հեռագրական թիւեր և ամեն հաղորդակցութիւնք խզուած են այդ գաւառ-ներու մէջ: Յեղափոխականաց օրկանը իր վերջի թուով հրաւէր կը կաթոյս զազթական Մակեդոնացւոց՝ իրենց կըրտաց օգնութեան փութալ:

—Քաղաքիս Երկրագործական ցուցահանդէսը, որուն համար պատրաստութիւններ կը տեսնուէին երկար ա-տենէ ի վեր, բացուեցաւ վերջապէս անցեալ Զորեք-շաբթի օր, և կը շարունակուի տակաւին: Յազմաթիւ վաճառականներ, երկրագործներ, այգեպանք ու ընկի-րութիւններ մաս առած են այս հանդիսին մէջ՝ ի ցոյց ղնելով զանազան տեսակ ապրանքներ, արտադրութիւն-ներ ու կենդանիներ: Ասանց լուսագոյնին ու ամենայն-ջողին նուէրներ պիտի տրուին յատկապէս կարգուած յանձնախաւերբու որոշմամբ: Յուցահանդիսի սրահին մէկ կողմը յատուկ թատերաբեմ մը պատրաստուած է, ուր ամեն երեկոյ զուարճալի խաղեր տեղի կ'ունե-նան, ու քաղաքիս նուագածուսոց մէկ խումբը կը նուագէ՝ հանդէսը աւելի գրաւել ընելու համար: Այս ցուցահանդիսի ամենէ հետաքրքրական մասերէն մին պիտի ըլլայ Մանկանց ցոյցը՝: Ամեն ծնող հրաւիր-ուած է իրենց երկու տարեկանէ վար եղող զուակիր ի ցոյց ղնել հոնք եթէ փոփոքի: Ամենէ առաջ ու զե-ղապէմ՝ մանուկները նուէրներ պիտի ընդունին Յանձ-նախմբին յանձնարարութեամբ:

Յաւալի է տեսնել թէ ցոյցարարներու մէջ ոչ մի հայ երկրագործ կամ վաճառական մաս ու բաժին ա-սած է. և հաւանական չէ կարծել թէ պիտի զանախ հայ ծնող մը որ իր զաւակը ի ցոյց ղնէ հոն քանի մը ժամի համար՝ ոչ թէ նուէր մը խլուլ՝ այլ գոնէ հայկական գեղեցկութիւնը ի հանդէս բերելու նպա-տակաւ:

### Ճօրձ Ռշաշիկնկրն Ըաւիթն

—0—

Ռամկախարականաց արգարութեան գատաւորի այս ընտրելին 51 տարի առաջ ծնած է Թէկնրսի Նաշանգի մէջ. իբր 15 տարի առաջ եկած է Քալիֆօրնիա: Քալիֆօրնիայի վարչութեան օրով կարեւոր պաշտօններ վարած է Նաշանգիս զանազան գաւառներու մէջ, և 1888ին հաստատուած է ի Ֆրէզնօ, ուր բացի իր անձնական այլի գործէն՝ քանի մը նշանաւոր սուշներու կողմէ խաղող գնելու պաշտօն վարած է երկար ժամանակ ու ծանօթացած է բոլոր այգեգործներուն՝ գաւառիս մէկ ծայրէն մինչև միւսը:

1890ին Ըաւիթն հրատարակած է Քալիֆօրնիայի այգիներուն մէկ ընդարձակ տեղեկագիրը որ մեծ ծաւալով լին մատուցած է Նաշանգիս այգեգործներուն ու հանրածանօթ ըրած է զինքը այս գաւառիս ստեն կողմերը:

Ըաւիթն փաստարան մը չէ. բայց գատաւորի մը՝ բնական փաստարանի մը սպաւորութիւնը կը թողու մարգաւտ վրայ: Զուարթ, առայց և վերին ստաիճանի համակրելի մարդ մ'է: Իր անհամար բարեկամներն «գատաւոր» ախաղաղ կուտան իրեն ընդհանրապէս՝ անոր ցոյց տուած արգարախարակեան և խնդիր մը արգարութեամբ թրեւ՝ վճռելու բնաւորութեանը համար: Թէև գայն ծերունի մը կանուանեն շատեր, բայց Ըաւիթն՝ Զօնի Տիֆուի նման՝ 51 տարեկան երիտասարդ մ'է՝ առայց ու գաւարթագեւ:

Ֆրէզնոյի մէջ չկայ Հայ մը որ բուսական տանն այգիի գործ ըրած ըլլայ ու չի ճանչնայ այս մարդը: Եւ զինքը գիացողներուն մէջ չի կայ բնաւ մեկը որ վերին ստաիճանի գովեստի չի խօսի անոր վրայով: Ըաւիթն այն կարգի Ալեքիկայիներէն չէ որք Հայերը կը նկատեն 'օտարական' ու խոնարհ ստաիճանի տէր մարդիկ, և անոնց վրայ շատ բարձրերէն նայլ կը փորձեն. այլ ընդհակառակը նա «Տիւնքրատ» մ'է բառին բուն նշանակութեամբ: Համակրած է Հայոց տարիներէ իվեր, և ոչ թէ ընտրութեանց առթիւ՝ իբր բոլոր ընտրելիները ընդհանրապէս կը մտերմանան մեզի հետ: Հանրախարական Հայերէ շատեր՝ նոյն իսկ անոք որք՝ ստեն պարագայի սակ իրենց կուտակցութեան ընտրելիներուն միայն քուէ տալ կը փաստարանեն: Ըաւիթնի մտաին տարրեր կը խորհին բոլորովին: «Պէտք է Ըաւիթն ընտրուի, կրտէր մէկը անցեալ օր. բոլոր Հայոց քուէն անոր արուելու է, ոչ թէ սրով հասե պաշտօնին յարմարագոյն անձն է, կամ թէ Հանրապետականաց ընտրելին անհամեմատ աւելի փորձաւորութիւն ու արժանաւորութիւն ունի այս պաշտօնին, այլ սրովհետև Հայ գաղթականութեան մեծագոյն մտաին ծանօթ բարեկամն ու սիրելին եղած է տարիներէ ի վեր»:

Անոք որ Ըաւիթնի քուէ տալ չէն խորհլր, թող նեղութիւն յանձն առնեն անոր հետ խօսիլ քանի մը բողբէ: Գիւշին միջոց մը կայ զայն ճանչնալու համար:

Գործի օր մը՝ միջօրէի առեկները կէս ժամի չափ՝ Մարիփոզաև ճէյ փողոցներու անկիւնը կեցիր, և տես թէ սրուն հետ անցնող ժողովուրդը ամենէ աւելի կ'ժպտի, կը խօսի ու կը բարեկէ: Երբ գտնես այդ մարդը՝ վըստաւ հղիք թէ Ըաւիթն է այն:

### Ա. Հ. Արիլի

—0—

Հասարակագիտականաց այս Տրահաւաքի (Թէքսփոլէթթը) ընտրելին գրեթէ Հայոց մէջ մեծցած երիտասարդ մ'է. իր գէպ ի Հայերը ունեցած համակրութիւնը գործի մէջ փայլած վաստակները ապացուցած է շատ պարագաներու սակ: Արիլի գասախարակուած ու կարող երիտասարդ մ'է, իբր խընդրած պաշտօնը վարելու համար: Ժաւթկալ և սկզբունքի տէր մէկը ըլլալով՝ գիտէ ինքզինքը և իր գործը կատարելի արժանաւայել կերպով:

Եթէ նա ընտրուի յիշեալ պաշտօնին՝ Հայք յանձին Արիլի պիտի գտնեն անկեղծ բարեկամ մը Հարկահավաքի պաշտօնատեղւոյն մէջ:

### Ճ. Օ. Թրէյլըր

—0—

Ճ. Օ. Թրէյլըր Արեւիտիանի համար Հասարակագիտականաց ընտրելին է 60րդ Նաշանգարածնի կողմնէ: Այս երիտասարդ փաստարանը ծնած է այս Նաշանգիս Անտաիոսի գաւառին մէջ 1872ին, և մանկութեան ժամանակ Ֆրէզնօ եկած է իր ծնողաց հետ՝ իբր այս գաւառու գեւ անապատ մ'էր, և Ֆրէզնօ քաղաքը՝ աննշան մի գիւղ: Իր 14 տարեկան հասակին մէջ Թրէյլըր սկսած է զրամ գիւղել իր կրթութեան համար. 17 տարեկան եղած տանն մտած է Սան Էզելի Նօրմըլ վարժարանը. անկէ ընթացաւ ըլլալէ յիտայ գատաւորութիւն ըրած է գաւառիս վարժարաններէ մէկին մէջ. սպա Անն Արպըրի օրէնսգիտական վարժարանը մտած ու անկէ ընթացաւ եղած է 1896ին: Թրէյլըր տարիի մը չափ արեւելք ճամբորդելէ վերջ Ֆրէզնօ վերադարձած ու սկսած է փաստարանութեամբ պարագիլ:

Արիլին հետ մեծնալով՝ սա երիտասարդ փաստարանը մօտէն ճանչցած ու գիացած է ժողովրդի պէտքերը. վարժարանի մէջ գասախօսելով իմաստասիրած է կրթական գործը. ազարակի մէջ աշխատելով սերտած է երկիրն ու անոր գեւ երևան չի բերուած հարատւութեան աղբիւրները, անանկ որ իբր երեսփոխան պիտի կրնայ գնահատելի ծաւալութիւն մատուցանել 60րդ Նաշանգարածնի ժողովրդեան:

### ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔՑԻ տպարանին մէջ կը տպուին ամեն տեսակ Հայերէն և Անգլիերէն գործեր՝ Այցետաւ, նամակագրի, պաշտօն, հարստեկան ծանուցագիր և տեսարկներ գոհացուցիչ գներով:

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

ՇԱՐԿԱՆՔԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033

ձե՛Յ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նախնայնորու և Քանաատայի համար Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սէնթ

Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Զրանգ — — Վեցամսեայ 5 Զրանգ

Բաժանորդագինը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը ղրկուին Խմբագրութեան հետևեալ հասցէիւ՝

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET

FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months..... 75 Cents

ՅՐԷՋՆՕ, ԳԱԼԻՖՕՐՆԻԱ. ՀՈԿՏ. 4, 1902

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՔ 'ՔԱՂԱՔԱՑԻ' Ի

—0—

Միտըլպօրօ, Մասս.	—	—	Պ. Միքայէլեան
Ուայթ Ինսփիլ,	'	—	Հ. Նիկողոսեան
Ուէսթ Հոպոքըն, Ն.	ձէրզի	—	Հ. Մաղուճեան
Ուօքէկըն, Իլլինոյ	—	—	Յ. Պոյաճեան
Պրայթըն, Մասս.	—	—	Գ. Վարդանեան
Պօսթըն, Մասս.	—	Սիրականեան և Գանիէլեան	
Սէլիմ,	'	—	Ա. Թաշճեան
Սըմիթ, Նիւ ձէրզի	—	—	Ս. Հացադորճեան
Հէվրի, Մասս.	—	—	Ս. Կարօ
Սէնթըրը Զօլս, Մասս.	—	—	Նշան Մինասեան

ՀԱՅ ԵՐԻՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

—0—

ձէյ և Սանթաքլարա փողոցներուն անկիւնը: Ամեն Կիրակի առտու ժամը 10ին Կիրակնօրեայ դպրոց և կեսօրէ ետքը ժամը 3ին Հայերեն քարոզ կըլայ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՎՅՈՒՄ

Ազգային Հոգաբարձութեան խնդրանք՝ յառաջիկայ Նոյեմբեր 9ի Կիրակի օրը, կէս օրէ վերջ, ժամը երկուքին Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Բնդհանուր Ժողովը արտաքոյ կարգի նիստ պիտի ունենայ նոյն Եկեղեցւոյ մէջ կարգ մը կարևոր խնդիրներ լուծելու համար: Ի մէջ այլոց ժողովին պիտի ներկայանայ

Առաջնորդի ընտրութեան առկախ խնդիրը:

Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ լինիլ անհրաժեշտ այս կարևոր ժողովին:

Ի Գլխաց Բնդհ. Ժող. Ս. Երր. Եկեղեցւոյ

Ատենադպիր

Մ. Ալմեան

Յ. Գ. Ամեն անոնք որք ատկաւին ստորագրած չեն Եկեղեցւոյ կանոնագիրը, կը հրաւիրուին ընդ փոյթ ստորագրել զայն՝ որպէսզի ձայն ու քուէ ունենան ներկայ կարևոր խնդիրներու մէջ:

Ֆրէզնօ, Հոկ. 2 1902

ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեզի հետ գործ ունեցող ու և է Հայրս հարցուր և սես թէ մեզմէ գոհ եղած չէ՞: Մենք Հայոց աւելի շատ կալուած կը ծախենք քան միւս բոլոր գործակալութիւնք ի միասին առներով: Եկ և մեր ունեցած Այգիներու, Ծառաստաններու և ուրիշ ամեն անասի կալուածներու գները լսէ:

Մօր Եւ Նիս

1150 Ա. Փողոց. Ֆրէզնօ

ԿԵՆՍՅԻ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ ԳԻՏՆԱԼՈՒ ՄԻՋՈՑ ՄԸ

Թէև անկարելի է գուշակել թէ մարդս քանի տարի պիտի կրնայ ապրիլ, բայց հետևեալ կերպով կարելի է մէկի մը ապրելիք տարիներու մօտաւոր թիւը գտնել՝ պայմանաւ որ արտաքոյ կարգի դէպք մը անոր մահուան պատճառ չըլլայ ժամանակէն առաջ: Հօրդ, Մօրդ և անոնց ծնողաց տարիքներուն թիւերը գումարէ իրարու հետ և բաժնէ վեցով . եթէ մնացորդը վաթսուներեք է՝ ամեն հինգ տարիի գլուխ մէկ տարի գումարէ անոր վրայ, և պատասխանը պիտի ըլլայ քու կենաց հաւանական տևողութիւնը: Իսկ եթէ մնացորդը վաթսուներեք վար է՝ մէն մի հինգ տարիէ մէկ տարի հանելու է, և պատասխանը պիտի ներկայացնէ կեսնաբից հաւանական երկարութիւնը: Եթէ կուզես հաւատալ, փորձէ:

Անունը

—0—

Այտերս վարդ կանուանես միշտ. Սոխակ մը կըլլաս զուն. Իսկ աչքերուս համար կըսես Զոյգ մ'աստղեր են անքուն:

Բայց միամիտ երիտասարդ, Հաւազոյն մը գտիր՝ Յարմար ախաղոս մը ինձ համար Անուն մ'որ չի մեռնիր:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

Անուն մը որ աստղերու պէս  
Արեւէն չի մարի,  
Անուն մը պարզ անուն վսեմ  
Որ հողույս յարմարի:

Երբ ամառ դայ վարդը կիյնայ,  
Կը մեռնի դարկահար,  
Չմեռ չեկած անոր թփեր  
Կը թափին ցրտահար:

Աստղեր մեզմէ շատ չեւի են,  
Աշխարհներ իրենց մէջ,  
Բայց իմ աչքեր մօտ են քեզի  
Կրակ սիրոյ անշնչ:

Բարբ աստղեր կը մթաղին  
Երբ կը ծագի արեգ,  
Բայց քո սիրով իմ աչք վառին  
Ըլայ մութ կամ ցորեկ,

Մի անուաներ զիս մարգարիտ,  
Ոչ գոհար, ոչ ոսկի.  
Հայ աղջիկ մ'եմ՝ սիրով լեցուն  
Ունիմ սիրտ մ'ու հոգի:

Մի անուանէր չրթունքներս  
Մեղր, կեռաս, սալոր,  
Չի մեղուներ չաշխատեցան  
Հոն մի բոպէ կամ օր:

Հոն սեանուած չեն պտուղներ,  
Ոչ ծառ ու ծառաստան.  
Ժիր մշակին չէ մտած հոն  
Խոփն ու արօր գութան:

Բայց քո չրթանց հոն հարուէն  
Կրակ մը կայ անվերջ՝  
Սիրոյ պայծառ հուր լուսաւոր  
Որ կը վառի իմ մէջ:

Չիս անուանէ սյուսհեան  
Քեզ ընկեր անբաժան,  
"Սէր" թող ըլլայ իմ անունս,  
Սէր՝ և ես քեզ արժան:

Չի երբ կեանքի ձեռք գայ,  
Չիւն տեղայ մագերուս,  
Գեղս երթայ, թոռմին այտերս՝  
Մթնէ լոյսն աչքերուս,

Նոյն անունով սիրտս նորէն  
Պիտի շարժի ուժգին.  
Նոյն անունով երբ քեզ կանչեմ  
Իմ ընկերս անգին:

Կենաց աշնան հովերէն վեր՝  
Սառայցներէ հեռի  
Նոյն կրակը սիրոյդ անկեղծ  
Յաւիտեան պիտի՝ վառի:

Ուրիչ անուն մի տար ինձի  
Ըլայ ծաղիկ կամ վարդ.  
Ես հայ աղջիկ մ'եմ՝ պարզ անկեղծ.  
Ծաղիկն է սիրոյ զարդ: Հ. Է.

—Ծիծեռնակ մը գարուն չի բերեր,  
—Նապաստակը թմբուկներով չեն սրար:  
—Չարաչար անձնասէրը բարկամ չունենար:  
—Հաշտուած թշնամիէդ զգոյշ եղիր:  
—Եթէ ուզես՝ կրնաս. եթէ գիտես՝ կ'ունենաս:  
—Հինաւուրց ծառ մը մէկ հարուածով վար չ'իյնար:  
—Գրացին գիտէ. ծածուկ բաց չկայ:

—Ս. Պասլը երբ պաշտօնական թուղթ մը ստորա-  
գրելու ըլլայ՝ աղանիւի փետուր մը կը գործածէ. իսկ  
ուրիշ գրութիւններու համար՝ սակի գրիչ:

Իւրանտացի էրիկը (կառապանին) — Որչափ կը  
պահանջես զիս և կինս Հիւզ Հօթէլը տանելու համար:

Կառապանը — Երկու տղար:  
Իւրանտացին — Որչափ կը պահանջես եթէ զիս մի-  
նակ տանիս:

Կառապանը — Նոյն գինը՝ երկու տղար:  
Իւրանտացին (իր կնոջ) — Կը սեսնե՞ս, սիրելիս, թէ  
ի՞նչ է քու արժէքդ:

Օտարականը (ճաշարանի մը մէջ) — Պէ՞տք է որ  
ծառաններուն նուէր մը տամ որ ուշագրութիւն դար-  
ձընեն ինձ:

Տեղացին — Անչլութեշա է՝ եթէ ասորձանակ մը չու-  
նիս հետդ:

—Կարապետը շատ բարի մարդ է. իր դրացիներ-  
ուն համար միշտ աղէկ կը խօսի:

—Սոյդ բարութեան նշան չէ. Կարապետ կը փափա-  
քի իր սուսնն ու այգին ծախել:

Շատ մը Հայ կնիկներ ծառի մը տակ նստած կը  
խօսէին անցեալ օր: Մէկը իր էրկանը վրայ խօսելով  
կրէր.

—Իմ էրիկս ո՛չ կը խմէ և ո՛չ ալ կը հայհոյէ. շի-  
տակը ըսելով բնաւ գէշ սովորութիւն չունի:

—Կը ծխէ՞, հարցուց ունկնդիրներէ մին:

—Այո՛, լաւ սիկար մը կը ծխի լաւ կերակուրէ մը  
վերջ: Բայց երարու վրայ հաշուելով՝ սովորը հազիւ  
մէկ սիկար մը կը ծխէ:

Էրիկը—Երեկի քեզ պատմած դաղանիքս ի՞նչու  
քու քով չի պահեցիր:

Կնիկը—Եթէ գաղանիք մ'ը ի՞նչու դուն քու քով  
չի պահեցիր:

Կասառուն—Երբ ջուրը սառ կը դառնայ՝ ի՞նչ մեծ  
փոփոխութիւն տեղի կ'ունենայ:

Աշակերտը—Փոփոխութիւնը կըլլայ գնին մէջ:

Կատարկապորտը — Իրա՞ն է որ դրամը կը խօսի  
կրտն:

Ճամբորդը — Այո՛,

Գ. — Երկու ամիսէ իվեր է որ սուսնձինն կը ճամ-  
բորդեմ ու մէկը ունեցած չեմ ինձ խօսակից: Հիմայ  
ալ երկար ճամբորդութիւն մը սկսելու վրայ եմ. կա-  
ղաչեմ ինձ տասը տղարնոց մը տուր որ ճամբան  
խօսակից ըլլայ ինձ:

Էրիկը — Կեանքս պիտի սպառնալագրեմ քեզ համար:

Կնիկը — Չէ, անանկ բան մի ըներ. ի՞նչ հարկ:

Է. — Շատ կարեւոր է. երբ մեռնիմ զաւակներս ան-  
պաշտօն չեն մնար: Տես մեր դրացին, երբ մեռաւ՝  
կինը երկու հազար տղար ստացաւ ընկերութենէն:

Կ. — Սե իմ գիտիս. ես այդպիսի բաղդ երբ կու-  
նենամ:

ԽԵԼԱՑԻ ՁԻ ՄԸ

Մեր այգեպաններէ մին վարժ ու ընտանի ձի մ'ունի, որ ամեն առաւօս սովորութիւն ըրած է իր տիրոջ կրտսեր աղջիկը զպրոց ստանիլ ու ասանձին ասն զար: Այս ձին՝ վերջերս օր մը փոխանակ զպրոցէ ասն զարու՝ ուղղակի զրոցի պոյտարի մը խանութը կերթայ: Արհեստաւորը կարծելով թէ ձին կորնցուցած էր իր ճամբան՝ կաշխատի զայն ասն զրկել, բայց կենդանին կը մերժէ երթալ. վերջապէս կերելի թէ տեսնելով որ պոյտարը չէր կրնար իր այցելութեան նպատակը հասկնալ՝ առջևի աջ սաքը վեր կը բարձրացնէ ու զայն ցոյց կուտայ պոյտարին, որ զարմացմամբ կը տեսնէ թէ սուր գամ մը խրած էր հոն: Պոյտարը ի հարկէ գամը կը հանէ շուտ մը, և ձին իր տիրոջ ասնը տանալ ճամբայէն ցատկաթիւրով վազել կը սկսի:

Հարկ է ըսել թէ կան մարդոց մէջ շատեր որք այս ձիուն շօտ չեն կրնար խորհիլ:

Ընտիր կերակրչքի հատար գնա

ՍԻԹԻ ՊԷՅՔԸՐԻՆ

ձ. Մ. Քօչուր և Փիքֆօրթ, ճաշարանատարք

1138 ԱՅ Բոթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Քաղաքացին ձեռքէ կը վաճառուի 3 Սէնթի միայն Քալիֆորնիայէ դուրս ուրիշ ամեն քաղաքներու մէջ: Մեր Գործակալներէն կը խնդրենք որ սակէ վերջ այս որչեալ գնով վաճառեն զայն:

Աւելցած թերթերը առ այժմ մեզ վերադարձնելու պէտք չկայ. այս մասին կը գրենք ասանձին նա մակուս:

Ստակի փոխարէն նամակադրոջմ գրկելու չէ: Հաշիւները երկու ամիսը մի անգամ գրկելու է մեզ. ամեն շարաթ գրամ գրկելու հարկ չի կայ:

ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ ԿՈՒՁՆԵՔ

Ամեն հայաբնակ քաղաքի մէջ Շարաթաթերթն ստարածելու համար: Պայմանները շատ նպատասաւոր են: Գրել խմբագրութեան հասցէին:

ԾԱԽՈՒ ԳՐՔԵՐ

Ամեն անոնք որ կը փափաքին վիենտիկ ապուած որ և է գիրք ստանալ, կրնան զայն ձեռք բերել խըմբագրութեան միջոցաւ, որ նոյն Միտարանութեան գործակալ կարգուած է:

Չաւիչի Ընկերութեան

Վարձած Փարինկ Հալիբըր, որոնց արածնեալ են Այդեպանք իրենց շախիշները յանձնել նոյն Ընկերութեան հաշույն:

Արմըպի ձ. Ք. Բնկ.	—	—	Թուլարի
Արմըպի ձ. Ք. Բնկ.	—	—	Արմօնա
Արմըպի ձ. Ք. Բնկ.	—	—	Ֆալլըր.
Պարնի Պ. Լ.	—	—	Արմօնա
Քասըլ Պրատըր	—	—	Ֆրէզնօ
Շաստըք և Բնկ.	—	—	Ֆրէզնօ
Տաստըք	—	—	Ֆալլըր
Տալիսիկ Չ.	—	—	Արմօնա
Իլըլ Փ. Ս. Բնկ.	—	—	Ֆրէզնօ
Իսթըն Փրօտըրըր Փ. Բնկ.	—	—	Ֆրէզնօ
Այլըն Վէյթ Բնկ.	—	—	Մայթէրօրօ
Էլ Քաճօն Փ. Բնկ.	—	—	Էլ Քաճօն
Էթիլանտա Ֆրաթ Բնկ.	—	—	Էթիլանտա
Ֆրէզնօ Համ Փ. Բնկ.	—	—	Ֆրէզնօ
Վրիֆին և Բաքէյթ Բնկ.	—	—	Սէրմա
Վրիֆին	—	—	Ֆրէզնօ
Վրիֆին	—	—	Տայնուպա
Վրիֆին	—	—	Մայթանա
Վրիֆին	—	—	Փարլիէ
Կէյս Ֆրաթ և Բէյլին Բնկ.	—	—	Թրէյլըր
Կուկընհէյթ և Բնկ.	—	—	Ֆրէզնօ
Հապր, Ա. Լ. Բնկ.	—	—	Ֆրէզնօ
Հապր	—	—	Սէրմա
Հանֆըրս Բ. և Տ. Ֆ. Փ. Բնկ.	—	—	Հանֆըրս
Ինտըրքոյալըն, ձ. Պ. Բնկ.	—	—	Ֆրէզնօ
Ինտըրքոյալըն	—	—	Հանֆըրս
Բինկոպըրկ Քօօփ Փ. Աստն.	—	—	Բինկոպըրկ
Լինէա Քօօփ Փ. Աստն	—	—	Փարլիէ
Մատիսըն Քօօփ Փ. Բնկ.	—	—	Մատիսըն
Մարալա	—	—	Մարալա
Մարգարեան և Բնկ.	—	—	Ֆրէզնօ
Մատիսըն և Պաննըր	—	—	Այլիլին մէջ
Օլիանտըր Փ. Բնկ.	—	—	Միլի
Փօրթըր Պրօտըրըր Բնկ.	—	—	Օլիանտըր
Փօրթըր	—	—	Ֆրէզնօ
Փօրթըր	—	—	Բիպլի
Փօրթըր	—	—	Սէրմա
Փօրթըր	—	—	Պէքրաֆիլա
Ֆրիլիքս Բ. Ս. և Ֆ. Բնկ.	—	—	Ֆրէզնօ
Ֆրիլիքս	—	—	Ֆալլըր
Ֆրիլիքս	—	—	Բինկոպըրկ
Քօզընպըրկ Պրօ. Բնկ.	—	—	Հանֆըրս
Քուս, Իրի և Հարվիլ	—	—	Սէրմա
Սէյլըր, Ա. Լ.	—	—	Մտէրս
Սերրոսեան Եղրարք	—	—	Ֆրէզնօ
Սերրոսեան	—	—	Թուլարի
Սերրոսեան	—	—	Լըմօր
Իւնիլըն Քօօփ Փ. Աստն	—	—	Լա Փարմա
Տրօճ Ֆրաթ Քօ.	—	—	Ֆրէզնօ
Քալիֆ. Բէյլին Կրօտըր Աստօրիէլըն	—	—	
Ա. Լ. Սէթըր, Ատնապպիլ	—	—	

# GEORGE BROS.

ՀԱՅՈՒՍՏՆԵՐՈՒՆԻ ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՃԵՐԾԱԿԵՂԵՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ  
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԵՐՉԱԿՆԵՐ.

1109 ՃԷՑ Փողոց, —Ֆրաք Պլաք— Ֆրէզնօ.  
Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց գիները բազմաապարար աւրիչներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վատահայնէք դուք զձեզ այս կարեւոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ստանալ ճՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ:

## ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ

ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ

*Sourisj Patsyhlunari Lnik.*

Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնք

# Ֆ Ր Է Չ Ն Օ

## ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՑԵՂԻՆ  
ԱՅ և ՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ

Թէլէֆօն — — — Մէյն 24

ՖՐԷՉՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ.

## ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ թուրքիայէն Ալեքիկա եկող բարեկամ մը տնիս, կամ եթէ կը փափաքիս թուրքիա կամ այլուր երթալ, թիքէթի համար գիտէ Աըթըն Փըսիֆիք ընկերութեան օֆիսը: Ալեքիկայի ու է մէկ կէտին համար սամս կը վրձնուէ միենայն ընկերութիւնը: Աւելի տեղեկութեանց համար գիտել առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՄԸՀԱՆ  
Տիվիժըն Փատինճըր Էյճընթ: Սիթի թիքէթ Էյճընթ  
Քաղաքի գրասենեակը—Թիւ 4013 ՃԷՑ Փողոց,  
Նոր Փաթըրսըն Պլաքին առջև

Կը ՅԱՆՉՆԱՐԱՐԵՆՔ

## Վ. Մ. ՃԱՆՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ԿԱՌԻԵՐՈՒ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ

Հարնէս, Մարակ և Ծածկոցներ: Այս զաշտի մէջ  
ամենատաժան և ընդարձակ վաճառատունը  
1817—1819 Թուրքի փողոց, Փօսթ Օֆիսին զիմացը:

Ճ. Մ. Սերոբեան, Ճ. Պաննըր, Յ. Մ. Սերոբեան

## Սան Ռոքքիս Վայի Լունս Քօ,

Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ԱՅ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆորնիա:  
Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամէն տեսակ կարուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ աւաճարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովարական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

## DR. GAZARIAN DENTIST

*Spp. B. Tzazariani,*

ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ  
Չամս Պլաք, ԱՅ Ըթրիթ, Ֆրէզնօ, Քալ.  
Գաղացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գոհացում Յաճախարգներուն: Գիները միշտ չափաւոր  
Թէլէֆօն — — — — — Ուայթ 231

## ՍԵՐՈՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ամենարարձր գին կը վճարեն

ԹՈՒՉԻ, ԳԵՂՉԻ ՈՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ  
ՉՈՐ ՊՏՈՒՂՆԵՐՈՒ:

## ՖՐԷՉՆՕ ՄԱՔԱՐՕՆԻ ՖԱՔԹՐԻ

\*\*\* Ա. ՏԻԱՎՉՉԻՕ — ՏԷՐ \*\*\*

Սան Պէնիթօ փողոց, Այի մօտ: Ֆրէզնօ, Քալիֆ.

## Ս Ա Ն ՈՒ Ա Յ Չ Ը Ր

ՀԱՐՆԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾԱԾԿՈՑՆԵՐ, ԵՒՆ.

Ամեն տեսակ Նորագույններ կըլան փութով:

1920 Մարիփոզա Ըթրիթ, Ֆրէզնօ:

**ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ**  
 1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ  
 Կեօքանակ Վաճառականք Նափայի, Արեւմտայի ևն.  
 գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:  
**ՆԵՐԿԱՑԱՅՈՒՑԻՉ ԷՑՃԷՆԹՆԵՐ**  
 Բիւսթիզի պաշտօնի գեղ ճանչցուած ՈՒԻԹԸՆԻ  
 ՄԷՏԻՍԻՆԼ Լուրերուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

**Քաւոյ Եղբայրներ**

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկալեն ընդունիլ Հայ այգեպաններու արտադրած պտուղներն և կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ գոչ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

**J. K. ELLEZIAN**

**Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն**  
 Նպարեղէններու, պտուղի, սիկարի, ծխախոտի, թէյի, սուրճի, պէյքիսի փավալերի, ձիթաւաղի ևն.  
 1145 ԱՅ փողոց — Ֆրէզնօ — Թէլէֆօն Պլաթ 773

**Պարսիք Ըսրէյալըս,**

Էլ և Ֆրէզնօ փողոցներ, Պարսիզին զիմացը  
 Թէլէֆօն, մէյն 174 — — — — Ֆրէզնօ  
 Վարձու կառքեր. ճամբորդներու ձիերուն հողատար  
 րութիւն: Գնել և ծախել: Բոլոր գիշերը բաց ենք:

**ԹՐԷՅՉ ՓԷՅՓԸՐԻ ՀԱՄԱՐ**

ՍԻՄԷՆԹՈՎ ՊԱՏԱԾ ԳԱՄԻ ՈՒ ՀԱՐՏՈՒԵՐԻ  
 ՀԱՄԱՐ ԳՆԱ ԱՌ

**ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.**

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՑ ԹԷԼԷՓՈՆ  
 ՖՐԷՉՆՕ, ԲԱԼ ԷՔՆԷՆԻ — ԹԻՒ 2

Ձեր Ապահովագրութեան համար զիմեցէք առ

**Պ. Ֆ. Շէփերտ և ը Ընկ.**

1123 ՃԷՑ ԸՊԵՐԻԹ

Պաշտմանը փութով կը վճարուին: Յաճախորդը միշտ զոհացում կատանան:

**Տրք. Յ. Հ. Փարսեղեան**

ՖՐԷՉՆՕ ԼՄՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻԼՏԻՆԿ  
 Սենեակ 16 17, Թէլէֆօն Պլա 492, Ֆրէզնօ Քալ.

Ձեր ԱՏԱԽՉՆԵՐԸ ԳՆԵՑԵԻՔ

**Ա. Ա. ՓԻՐՍ**

ԱՏԱԽՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷՉՆՕ ԲԱԼ.

**Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն Ե Ր**  
 Ընտրութիւն. Նոյ. 4, 1902

Փրպիք Ատմինսթրէյթրի համար

**Բ. Տ. Չիքրընտըն**

Ռամկավարական կանոնաւոր ընտրելի:

Հանրապետական կանոնաւոր ընտրելի

**Բ. Ն. Պարսպոյ**

Քալիֆի Բիքօրալրի համար

**ՏՔԹ. ԱՆՃԸՍ Պ. ՔՕՎԱՆ**

ԲՕՐՕՆԸՐԻ ՀԱՄԱՐ

Ռամկավարականներու կանոնաւոր ընտրելի:

Գաւառական Գանձապետի (Քալիֆի Թրէժըրը) համար

**Ս. Վ. ՄԱՐՇԸԼԼ**

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի

**ԷՕՆ Վ. ԿԻԷՐԸԱՐՏ.**

Հանրապետական Ընտրելի ՇԷՐԻՑԻ համար  
 Ձեր օղնութիւնը կը ինդրուի յարգանքով:

Ընդհանուր Գատախագի համար

**Ճ. Վ. ՃՕՆՍ**

Հասարակապետականաց Ընտրելի

Թաքս Բօլէքթրի համար

**Ա. Հ. Կրիլի**

Կանոնաւոր Հասարակապետական Ընտրելի.

60րդ Երեսփոխանական Նախանգարածնէն Երեսփոխանի համար.

**Ճ. Վ. Թրէյալը**

Կանոնաւոր Հասարակապետական Ընտրելի:

Կանոնաւոր Ռամկավարական ընտրելի

**Ճ. Վ. Բալիքի**

Երրորդ քաղաքարածնի համար (Ֆրէզնօ) արդարութեան դատաւոր (ձըսթիս օֆ աը Փիս):

Երրորդ քաղաքարածնի Արդարութեան դատաւորի (ձըսթիս օֆ աը Փիս) համար:

**Ճօն Ճօնսէն Որդի**

Հանրավարական կանոնաւոր ընտրելի: